

ԱՍՏՈՒԱԾԱՂՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ

և

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Հայ ձեռագիր մագաղաթ գրուած 887-ին
Կը ներկայացնէ Յով. Անտարան ԻԵ. 45

HOLY BIBLE AND DIVINE REVELATION

ՊԱՏՐԱՍՏԵՑ

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

1996

ՈՐՊԷՍ ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գրիգոր Օտեան թրքահայ նշանաւոր գրագետ և պետական մարդ: Ծնած է 1834-ին Պոլիս, և մեռած 1887-ին Փարիզ, ուր ստացած է իր ուսումը և ուրկէ սկսած է իր գրական գործունէութիւնը, աշխատակցելով պոլսահայ պարբերաթերթերու:

Գրիգոր Օտեան կրնայ մեռած ըլլալ, սակայն անոր հաւատքն ու կեանքը տակաւին կը խօսին: Մտիկ ընենք անոր հաւատքի դաւանումը, թէ ինք հաւատացեալ մարդ է և օր մը չ'անցնէր առանց աղօթելու: Ան կը շարունակէ իր որոնումները ըսելով.

«Մարդս իյնալէն ետքը նորէն ո՞վ պիտի կանգնէ զինքը, եթէ ոչ՝ աղօթքը: Ուրեմն կ'աղօթեմ: Մեր հայրը մեզի սուրբ և անկապտելի ժառանգութիւն մը թողուց. հաւատքն ու բարեպաշտութիւնը՝ աղօթքը: Ուրիշ ի՞նչ ժառանգութիւն որ թողած ըլլար՝ մինչեւ հիմա վատնած էինք. այս ժառանգութիւնն ալ թէեւ կը վատնուի, սակայն նորէն կը ստացուի»:

«Աղօթէ՛ ստեղծողիդ, և դատաւորիդ առջեւ սփռէ՛ բոլոր խոստովանութիւններդ ու զղջումներդ: Աղօթող անձը կը վայելէ խղճմտանքի զուարթութիւնը զոր ոչ ոք կրնայ կապտել իրմէ»:

Աստուածաշունչը թարգմանող և մեր պատմութեան անժանգելի ոսկին ստեղծող հայրապետաց և վարդապետաց յաւերժօրէն շնորհակալ ենք:

Հաւատքը մի միայն հոգեւորականներու բով չէ՛, այլ նաեւ աշխարհականներու բո՛վ, որոնց հոգիները "խորան Աստուծոյ" են, ու սրտերը՝ բաց Աստուածաշունչ Մատեան:

Ակաբեւ Նորատուկեան
Նոյեմբեր 11, 1996

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ

և

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Քաղաքակրթութենէ հեռու մնացած մարդու մը երբ լուցկի մը տաս, ան կ'առնէ, կը նայի, գեղեցիկ կը գտնէ զայն, բայց չգիտեր թէ որքա՞ն օգտակար է իրեն համար: Պատը կը կախէ, բարձին տակ կը դնէ, կամ երբեմն-երբեմն անոր վրայի պատկերին կը նայի: Լուցկի մը նիւթ է ու ջօջափելի առարկայ մի՞նչէ որ զայն վառես, այնուհետեւ ան կրա՛կ է ուժ ու զօրութիւն, նոյնպէս ալ Աստուածաշունչի բառերը կը դադրին ինծի համար գիր ու տառ (նիւթ) ըլլալէ ու կը դառնան հոգի և ուժ, զգայնութիւն և շարժում:

Հեռաւեստիկ պղինձէ թելը cable-ը երբ տարրալուծարան տանիս երբեք չես կրնար տեսնել գունագեղ պատկերներ, ոչ ալ լսել մեղեդիներ այդ թելին մէջէն: Իսկ երբ պղինձ թելը ոգեւորուի (եղեկորականանայ) միայն ա՛յն ատեն այդ նիւթ կարծուածը կը դառնայ ոգեղենի՝ ու անտեսանելին՝ տեսանելի: Ջայնական և լսողական օրէնքներով երբեք կարելի չէ հասկնալ թէ ինչպէ՞ս ստեղծուած է Պեթհովենի հոգիին մէջ անոր իններորդ սիմֆօնին: Նոյնպէս ալ Աստուածաշունչի գրական բառերու *տառիչ*, կամ օրէնքին մէջէն չէ՛, որ պիտի հասկնանք աստուածային ոգեղէն յայտնութիւնը, այլ գիրերու հոգիի՛ն և բառերու ներշնչումի՛ն ընդմէջէն միայն:

Հայերէն այբբենագիմը դարձաւ կրօնական ու մշակութային թագաւորութիւն մը, ընդդէմ տարանջատող ու բաժանող երկրային թագաւորութեան: Ա. Մեսրոպ Մաշտոցի աշակերտներէն Կորիւն, կ'ըսէ. "Աստուած մատակարարած է իր ջնորհները թէ՛ հրեաներուն և թէ՛ հայերուն, մէկուն տասը պատուիրաններ տալով, միւսին՝ *երեսու նվեց երկաթագրեր*":

Ա. Մեսրոպ Մաշտոցի տարիներու խոկումներուն և թափառումներուն արգասիքը այբբենագիմի գիւտը չէր, այբբենագիմը այդ գիւտին *միջոցն* էր միայն: Ա. Մեսրոպի հրապարակած հրաշալի այբբենագիմը գիտէ՞՞ք ինչո՞ւ համար էր՝, հայացնելու համար Աստուածաշունչը և ազնուացնելու համար հայը:

Ա. Մեսրոպ ու Ա. Մահակ կաթողիկոս ինչո՞ւ հայացուցին Աստուածաշունչը ու ո՛չ Հնդկական Վեստները կամ Զրադաշտական Մագտէութիւնը:

Աստուածաշունչը իր կրկին Ուխտերով (Հին և Նոր Կտա-

կարան), սուկ Եբրայական գրականութիւն մը չէ, ինչպէս են Վետաները՝ Հնդկաց և Ավեստան՝ Մագսէականներուն համար: Հին և Նոր Կտակարանները, աստուածային ծրագրի մը հետ կապ և առնչութիւն կը պահեն: Աստուածաշունչին մէջ կը զգանք Աստուծոյ ջերմ ջունչին հաղորդականութիւնը, հո՛ն կը տեսնենք Յիսուս Բրիստոսի կազդուրիչ անտիսը և հոգւոյ փրկութիւնը: Աստուածաշունչը հոգեւոր սնունդի անհատնում ջտեմարանն է:

Մարդկութեան ծագումը ո՛չ թէ *պատահականութեան*, ու դիպումը մը հետեւանք է, այլ աստուածիմաստ ծրագրի ու *սիրո՛յ արտայայտութիւնն* է: Հաւատք առ Աստուած որ ստեղծած է մարդը և Պահպանիչն է անոր գոյութեան, անելի իմաստալից ու պերճախօս է քան պատահականութեան, դիպումը ու ճակատագրի վարկածը:

Դիպումը ու պատահականութիւն միայն *սխտակա՛ն* արդիւնք կու տան: Դիպումով օթոյի մը անիւը կրնայ պայթիլ, բայց յիսուն մղոն պայթած անիւով եթէ բշտ օթոն, անիւը չի շտկուիր... :

Այսօր մարդկութիւնը կ'ապրի յարափոփոխ գաղափարներու և շփոթութեանց դարու մը մէջ: Ձեռք գիտեր թէ ո՛վ ենք մենք, ուրկե՛ կու գանք և ո՛ւր կ'երթանք, ի՛նչ է իմաստը կեանքին և ի՛նչ է իմաստը պատմութեան: Արուեստն ու գիտութիւնը պատասխան չունին: Այսօր մարդիկ լծուած են կառքի մը առանց գիտնալու թէ ո՞ւր կ'երթան: Ո՛չ թէ միայն հայերը հեռացած են Աստուածաշունչի գիտութենէն, այլ բոլոր աշխարհի բրիստոնեաները, և բոլոր յարանուանութիւնները: Բրիստոնեայ աշխարհ դարձած է *բազկաթոռեան* հաւատացեալներու եկեղեցի: Ո՛չ թէ Աստուծոյ կամ աղօթքի տուն, այլ ինքնացուցադրութեան վայր մը:

Նման շփոթութեանց մէջ Աստուածաշունչը կը մատուցանէ չորս նիւթեր՝

- ա. Աստուած, Արարիչն է երկնի ու երկրի, և կը կառավարէ ոչ միայն բնութիւնը, այլ նաեւ համաշխարհային պատմութիւնը:
- բ. Մարդը, գազաթնակէտն է արարչագործութեան, Աստուծոյ պատկերով ստեղծուած, սակայն *խայթարուած*...
- գ. Յիսուս Բրիստոս գերագոյն Յայտնութիւնն է Աստուծոյ, աշխարհի Փրկիչն է ու Աստուծոյ Որդին:
- դ. Աստուած մարդը կատարեալ չէ ստեղծած, այլ կատարեալ *դարձնելու* համար ստեղծած է զայն: Մեր զաւակները տոբթորայի տիտղոսով չեն ծնիր, կը զարգանան ու յետոյ չափահասութեան կը հասնին: Բրիստոս չըսաւ. «Եկե՛ք Ինձի ու ես ձեզ կատարեալ ընեմ», այլ ըսաւ. *«Կատարեալ եղե՛ք ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»*: Դո՛ւք զձեզ կատարեալ ըրե՛ք, աշխատանք ո՛վ, համբերութեամբ ու փորձառութեամբ:

Աստուածաշունչը թէեւ հայկական մատենագրութիւն մը չէ, սակայն Հայ գրականութեան և բանահիւսութեան ակնադքիւրը դարձած է: Աստուածաշունչը դարձաւ նորածին հայ գրաւոր լեզուի մայրական կաթը: Հայ Ոսկեդարու ուժականութիւնը: Հայ այբբենագիտի ծննդագործի՛չը և Հայ պայքարամարտի ոգին ու անոր յաւերժութեան գրաւականը-- *մարդ և Աստուած յարաբերութիւնը*: Եթէ չ'ըլլար Աստուածաշունչի թարգմանութիւնը, հայեր շուտով պիտի ձուլուէին պարսիկներու կամ ասորիներու հետ, յախտենապէս հեռանալով պատմութեան հորիզոնէն: Ներագոյեցիկ երկու բարոյական ուժեր՝ հնարած է հայը: Հայ գիրը և Աստուածաշունչի թարգմանութիւնը, հայ ժողովուրդի գոյութիւնը ապահովող ամենակուռ վահանը դարձած են:

Բազմաթիւ գրական ստեղծագործութիւններ կան, որոնք կը դառնան թիւ ու վիճակագրութիւն՝ մատենադարաններու մէջ ու կ'անհետին ժամանակի յորձանքին հետ:

Գրական արտադրութիւններ ալ կան, որոնք կը բարձրանան վեր իրենց շրջապատէն, և իրենց ներկայութեան շուքը կը թողուն իրենց անմիջական շրջապատին վրայ միայն:

Իսկ Աստուածաշունչը ա՛յն յայտնութիւնն է որ կը բարձրանայ ոչ միայն իր շրջապատի բոլո՛ր գրութիւններէն ու ժամանակէն վե՛ր, իր տիրապետող ու գերադաս ներկայութեամբ, ոչ թէ շուք մը, այլ կենարա՛ր գօրութիւն մը կը թողու ամբողջ համաշխարհի պատմութեան և ժամանակին վրայ:

Ինչո՞վ կը պարծի Հայը այսօր: Անցեալի իր կայսրութեա՞մբը, իր գաղթատիրութեամբը, ու իր նաֆթային հորերու հարստութեա՞մբը, ո՛չ, այլ իր Եկեղեցիներո՞վ ու Աստուածաշունչի թարգմանութեամբ: Կարելի չէ նկարագրել և պատկերացնել հայ մշակոյթը առանց հայ հոգեւոր երաժշտութեան՝ հայաբարբառ աղօթք ջարականներու:

Խոր վիրապէն ճառագայթող լոյսը, 17 դարեր առաջ, քալե՛ց Հայ ժողովուրդի ճամբաներէն, ապրեցա՛ւ հայ ժողովուրդի սրտին զարկով ու դարձաւ Նարեկացի, Ծնորհալի ու Տաթևացի ու մանաւանդ վերապրեցուց Մեծ Եղեռնէն ճողոպրած հայ հաւատացեալները:

1604-ին Ծահ Ապպաս 300-400 հազար հայերը նախիրի նման Բջեց դէպի Արաբս գետ: 50-100 հազար հայեր խեղդամահ եղան, մնացորդները հասան Թաւրիզ: 17-րդ դարը Սպահանի և Նոր Զուղայի հայութեան ոսկեդարն էր: Ի՞նչ ըրին հայերը այդ

Ոսկեդարուն:

Ամբողջ Միջին Արեւելքի առաջին տպարանը Ս. Ամենա-
Փրկչական վանքին տպարանն է: Վանականներ իրենց ձեռնով
կառուցին տպարանի գործիքը, կաղապարները, ձուլեցին տառերը:
Տպարանը հիմնուեցաւ 1636 թուին և 1638 թուին Սաղմոսարանի
առաջին գիրքը տպուեցաւ: Ներկայիս 1992՝ Նոր Զուղայի մէջ կան
գործօն 13 եկեղեցիներ՝ Ամենափրկիչ վանքը՝ իր տպարանով,
Թանգարանով, ձեռագրատունով և մատենադարանով:

Հայ համայնավարները 1979-ին 100,000 տպաֆանակով վերա-
հրատարակեցին Նարեկը՝ հայերէնի և ռուսերէնի, որովհետեւ ուրիշ
հպարտանք չունէին:

«Պարոյր Սեւակ, 20-րդ դարու հայրենի բանաստեղծը կ'ըսէ.
«Ով չի կարդացել Աստուածաշունչը, նա չի կարող իսկական
իմաստով գրագէտ մարդ կոչուել, առաւել եւս՝ գրականագէտ: Նրա
հիման վրայ են ստեղծուել համաշխարհային գրականութեան ու
արուեստի գլուխ գործոցները: Վկայ՝ *«Աստուածային Կատակեր-
գութիւն»ը, Նարեկը, Ռաֆայէլը:* Հիմա արդէն գիտութիւնը սկսել է
լրջօրէն զբաղուել Աստուածաշունչի պատմական ու առասպելական
հիմքերու բացատրութեամբ: Բանից պարզոււմ է, որ մտացածին
համարուած հրաշապատումները բնաւ ալ ցնդաբանութիւններ չեն, և
անցած Բաղաֆակրթութեան ուսումնասիրութիւնը դեռ շատ առեղ-
ծըւածներ կը բանայ Աստուածաշունչի էջերում»:

Ո՞վ կը կարծէ՞ Թարգմանած է Աստուածաշունչը չինարէնի:
**Առաջին անգամ Աստուածաշունչը Զինարէնի Թարգմանողը
Զուղայեցի հայ մըն է:** Գանթոնաբնակ չինարէնի ուսուցիչ
Յովհաննէս Ղազարեան (1700-1800 թ.) անգլերէնէ չինարէնի
Թարգմանած է Աստուածաշունչը (Զինարէն առաջին և լաւագոյն
Թարգմանութիւնը կը համարուի):

Ի՞նչ է Աստուածաշունչ Մատենը:

Ան աստուածայայտնութեան բնութագրութիւնն է, որ կ'իմաս-
տաւորէ, թէ Աւետարանները նշանասիւներն են կեանքի, որոնք
եթերայինը կը թանձրացնեն, աննիւթականը կը մարմնաւորեն և
անտեսանելին տեսանելի կ'ընեն, այսինքն Մարդեղեալ Յիսուսի՝ մէջ
զԱստուած կ'իմաստաւորեն:

Աստուածաշունչը 1300-1400 տարիներու ընթացքին արձանա-
գրրուած է աւելի քան Բառասուն մարդոց գրիչով,

ա. Որոնցմէ ոմանք թագաւորներ էին, ուրիշներ՝ հովիւ կամ գիւ-
ղացի, Բահանայ կամ պետական գործիչ, բանաստեղծ կամ

- իմաստասեր, ձկնորս կամ մաֆսաւոր, վրանագործ կամ բժիշկ:
- բ. Աստուածաշունչը կը բաղկանայ երկու մասերէ՝ Հին Կտակարան և Նոր Կտակարան կամ Ուխտ:
- գ. Համաշխարհային մշակոյթի մեծագոյն կոթողն է Աստուածաշունչ Մատեանը:
- դ. Աստուածաշունչը նկատելի ազդեցութիւն ունեցած է համաշխարհային մշակոյթի զարգացման վրայ:
- ե. Արջակ Զօպանեան ըսած է. «Ազգային գրականութիւնը իր ծաղկման ու զարգացման մէջ շատ բան կը պարտի եբրայեցի բերթողներուն ու մտածողներուն, անոնց շատ բան կը պարտին նաեւ Տանթէներն ու Միլտոնները, Լամարթիններն ու Հիւկոները»:

Ան մէկ է իր ներքին հրաշալի միութեամբ և իր *հիմնական* ուսուցումով ու պատգամով: Գիտական կամ աշխարհագրական դասագիրք մը չէ: Աստուածաշունչը մեր հարցերուն ու պըրպըտումներուն պատասխանն ու լուծումը չէ, այլ մեր կեանքի հարցումները *խթանող* է: Աստուածաշունչը հիմնաբարն է օրէնքի և բարոյականութեան, ուղենիշը ուսուցման և դաստիարակութեան ու ծաղկաստանը արուեստներուն: Աստուածաշունչը արուեստի բոլոր մարգերուն մէջ դարձած է բանաստեղծութիւն, բանդակ, իմաստասիրութիւն կամ նկարչութիւն, գրականութիւն կամ գեղարուեստ:

Աստուածաշունչը աստուածային յայտնութիւններով լայնածաւալ ովկիանն ու շտեմարանն է: Ճշմարտութիւններու յորդաբուխ աղբիւր մը և գանձերու անգին գանձարան մը: Մ արդու անաղարտ միտքը Յաւիտենականի՛ն Մտքին մէկ ցոլքն է, լոյսի ովկիանին մէկ հիւլէն: Աստուածաշունչը վիճելի "կարծիքներ" չէ որ կը յայտնէ, ո՛չ ալ *տեսութիւններ*: կը բանաձեւէ, այլ **յայտնութիւններ** կ'ընէ: Աստուածաշունչի մասնագիտական գիտելիքները չեն որ մեզ աւելի լաւ բրիստոնեաներ պիտի ընեն, այլ անոր հոգեկան *զգաստութիւնները*, որոնք կը նշանակեն՝ մեր հոգեւոր գիտութեան *գործարարումները*:

Հրէական Հին Կտակարանը բաժնուած է չորս մասերու, որոնք են.

1. Օրէնքի գիրքերը, 2. Պատմութիւնը, 3. Մարգարէները,
4. Իմաստասիրական Բարոյագիտութիւնը:
- բ. Հին Կտակարանի բոլոր գիրքերն ալ եբրայական լեզուով գրուած են, բացի հետեւեալ հատուածները՝ Եզրաս 7. 8, 9.

18, է. 12-26, Դան. Բ. 4-է. 28 և Երեմ. Ժ. 11--որոնք գրուած են Արամերէն լեզուով (Մեմական և հին Բաբելոնեան):

գ. Հրեական Հին Կտակարանը բաղկացած է 24 գիրքերէ՝

1. Հայերէն Հին Կտակարանը ունի 48 գիրքեր: Թեպէտ աւելի բաժանումներ ունի, սակայն նոյն համեմատութիւններով:

2. Անգլերէն King James Թարգմանութիւնը ունի 39 գիրք:

**Հին Կտակարանին առաջին մասը կը կոչուի Հնգամատ-
եան Օրէնք՝** որ կը բաղկանայ Ծննդոց գիրքէն ու կը բացատրէ Ստեղծագործութիւնը:

Ելից գիրքը կը ներկայացնէ Իսրայէլացիներու ազատումը Եգիպտոսէն և Մինայի անապատին մէջ 40 տարի անոնց թափառումը:

Ղեւտացւոց գիրքը՝ պատուէրներ են քահանաներուն և տօնական օրերուն:

Թուոց գիրքը՝ Իսրայէլի երկրորդ մարդահամարն է 40 տարի թափառելէ յետոյ:

Երկրորդ Օրինաց գիրքը՝ օրէնքներուն կրկնութիւնն է:

Պատմական գիրքերն են՝ Յեսուէ մինչեւ Յոբա գիրքերը:

Այս գիրքերուն մէջ կը կարդանք Քանանու երկրին գրաւումը, Դատաւորաց շրջանը և զանազան թագաւորութիւնները: Գլխաւոր հարցերն են, Աստուծոյ արդարութիւնը, արդարներուն տառապանքն ու չարերուն յաջողութիւնը:

Մարգարէական գիրքերը կը ներկայացնեն Մեծ և Փոքր մարգարէները: Մեծերն են՝ Եսայա, Երեմիա, և Եզեկիէլ ու Փոքր մարգարէները՝ Դանիէլ, Ովսիայէ մինչեւ Մաղաքիա:

Բարոյագիտական գիրքերը, որ կը գտնուին չորրորդ մասին մէջ, աւելի իմաստասիրական խորհրդածութիւններ են: Ինչպէս Սաղմոսները, Առակացը, Ժողովողը և Երգ Երգոցը Սողոմոնին:

Հին Կտակարանի պատմութեան թատերաբեմը ոչ թէ միայն հին Պաղեստինն է իր բազմազան ցեղերով ու ժողովուրդներով, այլ նաեւ՝

1. Եգիպտոսը իր բուրգերով ու նուաճումներով,
2. Սուրբեաններն ու Բաբելոնացիները իրենց աստղագիտութեամբ և Բաղադակրթութեամբ,
3. Հիթիթները, Միտիանացիները և Ուրարտացիները,
4. Ասորեստանը՝ իր բանակներով, արձանագրութիւններով և յաղթանակներով,
5. Սուրիան իր արամերէն լեզուով,

6. Փիւնիկէն (Լիբանան)՝ իր առեւտուրով, Ա. Բ. Գ.-ով և արուեստով
7. Պարսկաստանը՝ իր հսկայ կայսրութեամբ և աշխարհակալներով:

Հին Կտակարանը բազմաթիւ անձերու կողմէ մարգարեացուած գրաւոր վկայութիւններու համերգ մըն է Յիսուս Բրիստոսի Մնունդին ու Խաչելութեան *նախատեսութեամբ*: Հին Կտակարանը ստուերն էր Նորին:

- ա. Հին Կտակարանին մէջ Աստուած եղած էր ջունչ, եղած էր ձայն, եղած էր երեւում. Բրիստոսով Ան եղաւ *Մարմին*:
- բ. Հին Կտակարանը գործ ունի յանցանքի և պատիժի հետ. *«Աստու ընդ աստման»* նշանաբանով: Նոր Կտակարանը գործ ունի հոգւոյ մեղքին հետ, որ կը մաքրէ *սիրով* և աստուածային տառապանքով:

Մարդ-գաղտնիքին բանալին՝ Աստուածաշունչ Մատեանն է: Հին Կտակարանը ազգի մը պատմութիւնը ըլլալէ աւելի, Աստուծոյ ինքնայայտնութեան և փրկագործութեան պատմութիւնն է տարբեր անհատներու կեանքին մէջ:

1. Անոր մէջ յիշուած պատգամները կը վերաբերին բոլոր անհատներուն և բոլոր ժամանակներու համար:
2. Աստուած միշտ գործած է տարբեր անհատներու մէջ և գործածած է զանոնք իրագործելու Իր փրկագործչական ծրագիրը: Այսինքն
3. Հասցնելու մարդ էակը **չափաճասութեան**:

Հին Կտակարանին մէջ Աստուած կը յայտնուի որպէս *Վատող Մորենի*, իսկ մարգարէները Ձինք կը հասկնան որպէս **պատերազմի** Աստուածը--(Յեսու Ե. 4-6, 13-14, Զ. 16-19, 24, 21-23, Է. 24):

Մակայն Նոր Կտակարանին մէջ Ան կը յայտնուի Իր Միածին Յիսուս Բրիստոսի Մարդեղութեամբ, որպէս Խաչեցեալ Աստուծոյ Միածին Որդին ցոյց տալով աստուածային **ՍԷՐԸ**:

Ինչո՞ւ Նոր Կտակարանը

Լրացած էին բոլոր մարգարեական նախատեսութիւնները Յիսուսի մասին: Վերջացած էր մեղքի ամենազօր տիրակալութեան ջրջանը և կը սկսէր Ճնորհաց Դարը: Աստուածաշունչը աստուածային ինքնաբացայայտումի *աստիճանակա՛ն* Բողազերծումն է:

Հին Կտակարանի մէջ աստուածայայտնութիւնը կը սկսի Մովսէսի օրէնքներով, կը զարգանայ Սաղմոսներու մէջ, կը յառաջ-

դիմէ և կը բարձրանայ երկնաբարձ գագաթներ մարգարէութեան մէջ ու գերագո՛յն կատարին կը հասնի Յիսուսի Մարդեղութեամբ, Անոր ապրումով և Անոր զոհողութեամբ: Պօղոս Առաքեալ կ'ըսէ.

«Այն խորհուրդը՝ որ ծածկուած էր դարերէն ու սերու նշներէն, հիմա յայտնուեցաւ իր սուրբերու նա» --Կորն. Ա. 26

Պայծառակերպութիւնը Յիսուսի յաղթական Յարութեան երեւումին նմանութիւնն է: Իր Դեմքը կը ճառագայթէ հրաշալի պայծառութեամբ, լուսեղէն ճառագայթներով, ձիւնէն աւելի սպիտակ, աստուածային լոյսով:

Իր Մարմինը լոյսով կ'ողողուի, երկինքի լոյսին կը փոխուի, կը լուսեղինանայ: Իր Հոգին կ'արտացոլայ հոն, վասնզի հոգին լոյս է ու կրակ, արեւ է ու սէր: Մովսէս ու եղիա կու գան վկայելու Նոր Լոյսին համար, որ կը փողփողի Թափոր լեռան գագաթէն, որ ըստ. **«Ես եմ լոյս աշխարհի»**: Մովսէս ու եղիա այլեւս պիտի չերեւին, աշխարհ անոնց օրէնքին պէտք չունի: Ջայն մը կը լսուի. **«Դա՛ է որդի իմ սիրելի, դմա՛ լուարուք»**: Անո՛ր միայն պէտք է ունկնդրել, որ յաւիտենական կեանքի խօսքերը ունի:

Կ արեւի չէ մէկ ուստումով բարձրանալ առ Աստուած ու զգալ Անոր Հայրական և սրբազան Ներկայութիւնը: Նման արշալոյսող արեւին: Պատանին կամաց-կամաց կը հեռանայ մանուկներու խաղէն և կը դառնայ երազուն, երեակայող և խորհող ու կ'արթնան անոր անհետաքրքիր զգայարանները ու ան կը դառնայ չափահաս:

Յիսուս Զրիստոս Ի՛նք ըստ. «Վստահ եղէք, թէ մարդոց մէջ Տովհաննէս Ակրտիչէն մեծը չէ ծնած, սակայն երկինքի արքայութեան մէջ յետին եղողը Տովհաննէսէն աւելի մեծ է: «Մովսէսի Օրէնքը և մարգարէներու ուսուցումները մինչեւ Տովհաննէս ի զօրու էին. անկէ առդին Աստուծոյ արքայութիւնն է որ կ'աւետարանուի»--Ղուկ. ԺԶ. 16:

Աստուածաշունչին մէջ "Աւետարան" բառը, որպէս *գիրք* նշանակութեամբ, երբեք չի գործածուիր, այլ՝ այդ բառը երկու տեսակ գործածութիւն ունի. "Աւետարան կը նշանակէ. *աւետիս, բարի լուր, ուրախ լուր*, որ ծանուցումն է՝ թէ անա Աստուծոյ սպասուած թագաւորութիւնը հասած է --Մատթ. Դ. 23, Թ. 35, ԻԴ. 14: Մարկ. Ա. 14-15:

Աւետարանը կը նկարագրէ Յիսուսի կեանքին, գործերուն և ուսուցումներուն ամբողջութիւնը--Գործք. Ի. 24: Հռոմ. Բ. 16: Ա. Կորնթ. Դ. 15: Գաղ. Ա. 11-12:

Սուրբ Գրոց մեկնաբաններ *«Երանկներու Նարճը»* կը կոչեն "փոքրիկ Աւետարան":

Նոր Կտակարանը կը բաղկանայ 27 գիրքերէ ու կը բաժնուի հինգ մասերու:

Առաջին՝ Չորս Աւետարանները, 2-րդ՝ Գործք Առաքելոցը, 3-րդ՝ Պօղոս առաքելի 14 նամակները, 4-րդ՝ նամակներ գրուած զանազան առաքելներու կողմէ, և 5-րդ՝ Յովհաննէս առաքելի ն Յայտնութիւնը:

Նոր Կտակարանին լեզուն Յիսուսի ժամանակ գործածուած պարզ ժողովրդային յունարէն լեզուն է: Կարգ մը լեզուաբաններ կը կարծեն թէ Մարկոսի և Մատթէոսի Աւետարաններուն մէջ կան կարգ մը հատուածներ, որոնք արամերէն գրուած են:

Մատթէոս առաքել գրած է իր Աւետարանը մասնաւորաբար Հրեաներուն: Ան կը ջանայ ապացուցանել իր ազգակիցներուն, թէ Յիսուս Քրիստոս խոստացեալ Մեսիան (Օծեալ Տէրն) է: Մատթէոսի Աւետարանին մէջ "Երկինքի Թագաւորութիւն"ը ՅՅ անգամ յիշուած է: "Աստուծոյ Թագաւորութիւն"ը 4 անգամ: Մատթէոս աւետարանիչ Յիսուսը կը ներկայացնէ որպէս այն Մեծ Ուսուցիչը, որ իջխանութիւն ունի մեկնաբանելու Աստուծոյ Օրէնքը և Բարոգելու Աստուծոյ արքայութեան մասին: Լերան Բարոզն ալ կը գտնուի Մատթէոսի Աւետարանին մէջ:

Ս. Մարկոս իր Աւետարանը գրած է Հեթանոսներուն ցոյց տալով, որ Որդին Մարդոյ, համաշխարհի ներում տուող Միածինն է Աստուծոյ»:

Ս. Ղուկաս, "Միրելի բժիշկն" է, որ կը պատմէ Յիսուսի հրաշքները և բժշկութիւնները: Կը պատմէ "Անառակ Որդւոյն" առակը, "Բարի Մամարացին", Կորսուած ոչխարը, Անպիտան Տնտեսը: Ղուկաս Հրեայ չէր և ըստ Ս. Երանոսի՝ Միւրիացի բժիշկ մը, որ կանուխէն հաւատացած ըլլալով Յիսուսի, ընկերացաւ Պօղոսի, անոր առաքելական ճամբորդութեանց միջոցին, և գտնուելով Երուսաղէմ, յարաբերեցաւ միւս աշակերտաց հետ ալ:

Յովհաննէս Առաքել՝ աստուածաբան է: Ան կը ներկայացնէ Յիսուսը որպէս ճշմարիտ "Աստուածայայտնութիւն"՝ Աստուծոյ Որդւոյն Մարդեղութիւնը: Յովհաննու Աւետարանին մէջ առաքելալը կը ջեջտէ "հաւատալ"ը աւելի քան "հաւատք"ը, որովհետեւ հաւատքը կրնայ միայն "գիտութիւն" մը ըլլալ, իսկ "հաւատալ"ը գործօն արարք մըն է: Յովհաննու Աւետարանը ոչ թէ առաքելական վկայութիւն մըն է պատմական, այլ՝ պատմութենէն **անդին** վկայութիւն մը Յիսուս Քրիստոսի պատմական առաքելութեան:

Առաջին երեք Աւետարանները կը կոչուին

Համացոյց

Աւետարաններ, որովհետեւ իրարու կը նմանին:

1. Մատթէոս, Մարկոս և Ղուկաս աւետարանիչներ էին:
2. Ս. Մարկոս գրած է առաջին Աւետարանը 70 թուականին, որ պարզ և ամենակարճ Աւետարանն է: Ս. Մարկոս, առաքելներէն մին չէ, այլ օգնականը Պետրոս և Պօղոս առաքելներուն:
3. Ս. Մատթէոս և Ս. Ղուկաս գրած են իրենց Աւետարանները համեմատելով Ս. Մարկոսի Աւետարանին:

Նոր Կտակարանին երկրորդ մասը կը կոչուի Գործք

Առաքելոց, որ կը կամրջէ Աւետարանները Առաքելական Նամակներուն հետ ու անոր հեղինակն է Ղուկաս բժիշկը:

1. Գործք Առաքելոց գիրքը կը սկսի մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի Համբարձումով, Հոգեգալուստով, Պօղոս առաքելին դարձի գալովը, առաքելներու աւետարանչական արշաւներով և Պօղոսի շում գտնուելովը:
2. Գործք Առաքելոցին կը յաջորդեն Պօղոս առաքելին 14 նամակները և անոնց ալ կը յաջորդեն տիեզերական 7 նամակներ:
3. Նոր Կտակարանի վերջին գիրքը կը կոչուի "Յայտնութիւն", որ կը բովանդակէ մարգարէական ու վախճանական դէպքերը, որոնք պիտի կատարուին Յիսուս Զրիստոսի երկրորդ Գալուստով:

Կեդրոնական նիւթերը առաքելական կարգ մը նամակներուն.-

Առաքելական 21 նամակները ցոյց կու տան Զրիստոս Յիսուսի կեանքին, գործերուն և ուսուցումներուն *կիրարկումը* մեր առօրեայ կեանքին մէջ:

- Արդարացում--առ Հոռմայեցիս և Գաղատացիս
- Սրբութիւն--առ Կորնթացիս
- Եկեղեցին--առ Եփեսացիս և Կողոսացիս
- Տնօնութիւն--առ Փիլիպպեցիս
- Զրիստոնէական ընկերայնութիւն--առ Փիլիմոն
- Զրիստոսի անձը--առ Եբրայեցիս
- Զրիստոսի երկրորդ գալուստը--առ Թեսաղոնիկեցիս
- Եկեղեցական կազմակերպութիւններ--առ Տիմոթէոս և Տիտոս
- Հաւատքի գործը--Յակոբոս առաքելի նամակը
- Զաջալերութիւն քրիստոնէաներուն--Պետրոս առաքելի նամակները

Վստահութիւն և սէր--Յովհաննէս առաքեալի նամակները
Զգուշացում մոլորեցուցիչ վարդապետութեանց դէմ--Յուդայի
նամակը

Յայտնութեան գիրքը--յաղթանակի երգն է եկեղեցիին:

Հաւատ կամ հաւատալ բառերը տասն անգամ աւելի գործածուած են Նոր Կտակարանին մէջ քան Հինին մէջ, որ երեք անգամ աւելի մեծ գիրք մըն է քան Նոր Կտակարանը:

ա. Օրէնքը մարդկայի՛ն օրէնսդրութիւն մըն էր ինչպէս Յիսուսը սաւ:

1. «Օրէնքը *Մովսէսի* միջոցով իսկ շնորհն ու ճշմարտութիւնը Յիսուս *Քրիստոսի՝* միջոցով եղան»--Յով. Ա. 17:

Հաւատի գերագոյն իրաւարարը ո՛չ թէ Նոր Կտակարանն է, այլ Սուրբ Հոգին:

Հայ Զեռագիր Աւետարաններու կարգ մը գիտելիքները՝

ա. Աւետարանը ո՛չ թէ կենսագրութիւնն է Յիսուս *Քրիստոսի*, այլ հաւատքի վկայութիւն և յայտարարութիւն մը:

բ. Հայերէն ամենահին ձեռագիրը Լազեան Ճեմարանի 887 թիւ Աւետարանն է

1. Ամբողջ աշխարհի վրայ 25 հազար ամբողջական Աւետարաններ և 4000 Աւետարանի ձեռագիր պատահիկներ կան: **Ասոնցմէ՝**

2. 10,780-ը ամբողջական Աւետարան և 4000 պատահիկ ձեռագիրներ՝ Երեւանի Ս. Մեսրոպ Մաշտոց մատենադարանին մէջ:

3. 4500 ձեռագիր՝ Երուսաղէմի Ս. Յակոբեան վանքին մէջ:

4. 4000 ձեռագիր Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան,

5. 1200՝ Վիեննայի Միսիթարեան Միաբանութեան, և

6. 100 ձեռագիր՝ Նոր Զուղայի Ամենափրկիչ Վանքին մէջ:

7. Ստեփաննոս Օրբելեանի վկայութեամբ Միւնեաց Բաղաբերդ ամրոցին, 1170-թուականին Սելջուկները աւարի տուած են 10,000 ձեռագիրներ և յիշատակութիւն կայ որ մեծ քանակութեամբ ձեռագիրներ Միջին Ասիա տարած է Լենկիթիմուր:

8. Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանը արուեստի, գրականութեան, և հին ձեռագրերու սրբազան տաճարն է:

9. Հայուն միակ իսկական պարծանքը իր հաւատքն է՝ *Քրիստոնէութիւնը* և Աստուածաշունչը:

10. Աւետարանը փիլիսոփայական դրութիւն մը չէ, այլ **"Ճամբան"** է դէպի Աստուած:

11. Աւետարանը շուրջանակի ամբողջովին միաճիւստուած գրական *"պատմութեան"* մըն է, որ չի պատահուիր, այլ ամբողջութեամբ ընդունուելու է:

Աստուածաշունչ Մատեանի Թարգմանութիւնը.-

Առաջին անգամ ձին Կոստպարանը յունարէնի Թարգմանուեցաւ 286 Ն. Բ: Այս կոթողական գործը տեղի ունեցաւ Աղեֆսանդրիա 72 հրեայ ուսմաններու կողմէ: Բ. Ա. 283-246 թ. Աղեֆսանդրիոյ Պտղոմէոս Ֆիլատելփոս Բ. Թագաւորը կը հրահանգէ, որ մէկտեղուին գիտնականներ և թարգմանեն հրեական Օրինագիրքը որպէս ան-առարկելի թարգմանութիւն մը: Յունարէնով կատարուած Ա. Գրքի այդ թարգմանութիւնը կոչուած է (Եօթանասնից):

2. Երկրորդ թարգմանութիւնը Ասորերէն Աստուածաշունչն է Բ. դարուն, որ կը կոչուի Բեշիթօ (պարզ):
3. Երրորդը Լատիներէն թարգմանութիւնն է Ա. Հերենիմոսին, որ կը կոչուի Վուլկաթա, հրամանաւ Պապ Դամասուսի: Գրական այսմեծ գործը կատարուեցաւ 392 թուականին Բեթլեհեմի մէջ:
4. Չորրորդ թարգմանութիւնը Ղպտիներուն Աստուածաշունչն է: Այս թարգմանութիւնը լրացաւ երրորդ և չորրորդ դարուն:
5. Աստուածաշունչի ձինգերորդ թարգմանութիւնը Հայեջներու թարգմանութիւնն է չորրորդ դարուն:
6. Լեզուական թարգմանութիւններու կարգին, Հայկական Աստ-ւածաշունչը կու գայ որպէս 6-րդ թարգմանութիւն: Ա. Մահակ և Ա. Մեսրոպ իրենց աշակերտներուն օգնութեամբ (30 տարի-ներու ընթացքին) աւարտեցին հայերէն թարգմանութիւնը յունարէն Եօթանասնից և ասորերէն թարգմանութիւններէն: Հայերէն թարգմանութիւնը, իր կատարելութեան և իր ոճի գեղեցկութեան համար Ա. Վ. տը Լա Զրօզ (M. V. de La Croze), Ֆրանսացի գիտնականը, Աստուածաշունչի գրաբար թարգմանու-թիւնը կոչած է *«Թագունիի թարգմանութեանց»*: Այս որակումը չա-փազանցութիւն մը չէ, որովհետեւ տիեզերականապէս ընդունուած է: Աստուածաշունչի հայերէն թարգմանութենէն յետոյ, մշա-կութային և հոգեկան հպատակութենէ յաւերժական գոյատե-ւում սլացաւ Հայութիւնը: Մշակոյթը ժողովուրդի մը հոգիին հայելին է:
7. Եօթներորդ թարգմանութիւնը Վրացիներուն Աստուածաշունչն է Ա. Մեսրոպի օժանդակութեամբ:
8. Ութներորդը Սլաւներու և Ռուսերու Աստուածաշունչի թարգ-մանութիւններն են 9-րդ դարուն:

Կարգ մը հարբեցած գիտնականներու մերժումներուն հիմնական պատճառը՝ անոնց անհատական կամ խմբակցական *ըմաներն*, են. Բաղաճական, տնտեսական, ցեղային հակամարտու-թիւնները, և ջուայտ ու ցոփ կեանքի մը հետապնդումը:

Ֆրիտերիֆ Նիցչե կոտորակեց ու փշրեց բազմաթիւ մշակութային ու կրօնական կարծիքներ 19-րդ դարուն: Անհաւատութեան և անաստուածութեան յաղթարշաւ մը ձեռնարկեց ան: Ան կը հաւատար թէ կեանքը ունի ա՛յն իմաստը, ինչ որ ենթական կու տայ անոր: Ան ծանուց թէ Աստուած մեռած է: Նիցչե ներկայացուց քրիստոնէական առափինութիւնները՝ գլխութիւն, խոնարհութիւն, ազնուութիւն և անձնագոհութիւն որպէս *ուշխարամիտ*, բարոյականութիւն, որոնք պէտք են ջնջուիլ: Ան փառաբանեց ուժ և զօրութիւն որպէս մարդկային յաջողութեան միջնորդ: Հիթլեր դարձաւ Նիցչեի աշակերտը հրկիզելով աշխարհը և սպաննելով մօտ 52 միլիոն բնակիչներ:

Ժան Փօլ Սարթր ընհանրացուց կեանքի դատարկութեան տեսութիւնը: Ան տեսաբանեց ու քարոզեց վերջնական ոչնչութիւնը կեանքին, ցոյց տալով կեանքի անիմաստ պատճառը: Անաստուած, շուարած և ինֆնաստուածութեան ձգտող 19-20-րդ դարու իմաստակներ երգեցին ու տաղեցին, թէ միակ իրականութիւնը այս կեանքին մէջ *հաու ու խառնաշփոթութիւնն է*, միակ տիրակալողը *անտարբերութիւնն է...*:

Անգլիական Կառավարութիւնը՝ Խորհրդային Միութենէն 100 հազար ստերլինկի գնեց Աստուածաշունչի ամենահին ձեռագիրներէն մին, Թիշէնտորֆի քոտէքս «Մայնայիթիֆուս»ը, անդին՝ Վոլթերի ամբողջական երկերու 92 հատորնոց կաշեկազմ հաւաքածոն աճուրդով ծախուեցաւ միայն...8 շիլինկի:

Հակակրօն յեղափոխականներ, քրիստոնէական կրօնին դէմ մղուած պայքարին մէջ, առժամեայ յաջողութիւններ ունեցան, բայց երբեք չկարողացան ժողովուրդներու մէջէն արմատախիլ ընել կրօնի զգացումը և հաւատքի մարմաշը...: Գոյնզգոյն ու շլացուցիչ գաղափարներով նիւթապաշտ մտաւորականներ պղտորել կ'ուզեն գաղափարի ու հաւատքի վսեմ իրողութիւնները: Արեւմտեան մամուլի էջերը լեցուն են չափազանցուած լուրերով, սուտերով, միտք պղտորող և ուղեղ լուացող արտայայտութիւններով:

Գիտնականներ որքա՞ն վստահ են իրենց բարձրաթոնիչ վարկածին իրաւութեան:

1. Բարեջրջութիւնը որչա՞փ գիտականօրէն փաստուած է:
2. Գիտութիւնը ինչո՞ւ դուրս կը վտարէ զԱստուած իր սահմաններէն: Ի՞նչ է իր վախը:
3. "Անաստուած"ի դերը խաղացողներ կան, առանց համոզումի, առանց հիմի, անգէտ ու անպատճառաբանեալ:

Երբ մարդ կորսնցնէ Բացարձակին (Աստուծոյ) ըմբռնումը, ան կը կորսնցնէ ճշմարիտին ու կեղծին, սուտին և ուղիղին իրակա-

նութիւնը: Եթէ մարդկային ըմբռնումը հանդէպ ճշմարտութեան ենթակայական և յարաբերական է, ուրեմն ի՞նչ է ճշմարտութիւնը, ի՞նչ կրնայ ըլլալ ուղիղն ու սուտը:

Մարդկայնապաշտ փիլիսոփայութիւնը իր մարդակեդրոն պաշտամունքով ամենամեծ խաբէութիւնն է: Լուսանկարչական մեքենային բոլոր նկարած իրերը *ճիստակա՛ն* կը փաշուին, սեւը՝ ճերմակ և ճերմակը սեւ: Հզօրագոյն ստախօս մը և կեղծաւոր մըն է ան: Նիւթապաշտ գիտնականներ ամէն ինչ որպէս նիւթ կը տեսնեն:

Վերլուծութեան և «քանականութեան» օրէնքներու չենթարկըող ամենամեծ երեւոյթներէն մէկը *հաւատալ է*, հաւատա՛լ Աստուծոյ գոյութեան և Անոր Հայրութեան: Վերլուծումի չեն ենթարկուիր՝ մարդկային գիտակցութիւնը, հանճարը, ստեղծագործութիւնը, հոգեկան ապրումներն ու թոհչֆները:

Վիպասան Ֆ. Տոսթոեւսկի 19-րդ դարուն, իր գրած Բանի մը վէպերուն պատճառաւ ձերբակալուեցաւ ու յեղափոխականներու հետ մահուան դատապարտուեցաւ: Տոսթոեւսկի ապշեցաւ երբ իմացաւ իր մահուան վճիռը, որովհետեւ ինք յեղափոխական մը չէր: Ան ականատես եղաւ մահապարտներու գնդակահարութեան երբ անոնք մէկ առ մէկ սկսան գալարուիլ ու մեռնիլ: Կարգը իրեն եկած էր, զինք ալ կապեցին ցիցի մը ու տասնապետը հրամայեց զինուորներուն. «Պատրաստ»: Բայց նախ քան «կրակեցե՛ք» հրամանը արձակելու, տասնապետը հեռուէն լսեց արագընթաց ձիաւորի մը ֆառասմբակ մօտենալը: Երբ հասաւ ձիավարը, տասնապետին երկարեց թուղթ մը, որ Տոսթոեւսկիին մահուան վճիռը կը չէզոքացնէր:

Տոսթոեւսկին այն ա՛նձն է որ աչքով դիտեց մահը զգաց անոր սարսափագոյրու դէմքը ու վերադարձաւ ապրողներու աշխարհը: Սոյն փորձառութենէն յետոյ Տոսթոեւսկի խայթիչ կերպով ներկայացուց արդի մարդը իր "Քարամագու Եղբայրներ"ը վէպին մէջ, թէ, եթէ Աստուած գոյ չէ, ուստի ամէն ինչ արտօնեալ է:

"Դիւահարի"ն մէջ ան կը պատճառաբանէ թէ եթէ չկայ բացարձակ կշիռ և չափ (Աստուած), ուրեմն միակ տրամաբանականը մարդուն համար՝ անձնասպանութիւնը ըլլալու է:

Տոսթոյեւսկի ըսած է. «Մարդը գաղնիք է: Պէտք է հասկնալ այդ գաղտնիքը և եթէ ամբողջ կեանքդ յատկացնես հասկնալու, մի՛ ըսէր թէ ժամանակ կորսնցուցած ես: Ես այդ գաղտնիքով կը զբաղուիմ, որովհետեւ կ'ուզեմ **ՄԱՐԴ ԸԼԼԱՒ**»:

Ռայնհոլտ Նիիպուր, Աստուծոյ վրայ դրաւ իր վստահութիւնը, որ աշխարհէ անդին է, սակայն միջոտ գործօ՛ն պատմութեան մէջ: Անոր սերն ու ներումը կ'ազնուացնէ ու կը բարձրացնէ մարդկային

կեանքը և Անոր յուսադրիչ խոստումը կ'ազատէ մարդը հիասթափութենէ: Այսպիսի յոյս մը կու գայ մի միայն Աստուծոյ վերջնական յաղթանակի հաւատէն: Մարդ և աշխարհ աստուածային **մտածողութեամբ** կերտուած է:

Արիստոտելի բոլոր դասական գրութիւններէն միայն պատահական մնացած են: Այն ինչ որ արիստոտելեան կը կոչուի այժմ, 2-րդ դարուն (6 դար յետոյ) խմբագրուած է Անտրոնիգոսի (Antronicus of Rhodes) կողմէ:

1. Որքան հարագատ ըլլալը սոյն գրութեան ցարդ վիճելի հարց է:
2. Բրիստոսի Աւետարաններն ու Նոր Կտակարանը գրուեցան Բրիստոսէ յետոյ մօտ 60 տարիներու ընթացքին միայն..., *ակա-նատեսներո՛ւ* կողմէն:

Յիսուս Բրիստոս և Սոկրատես մեռան ճշմարտութեան համար: Սոկրատեսի համար ո՛չ մէկ տաճար կանգնած է: Սոկրատես յորդորեց ժողովուրդը, որ ուղղութեամբ խորհին: Բրիստոսի դաստիարակութեան մէջ կայ գերբնական հորիզոն և տարածք ու ներկայէն դէպի ապագան՝ իմաստ և յոյս:

Հայոց ոսկեքերան Գարեգին Կաթողիկոս Ա., ըսած է. «Բրիստոս ո՛չ թէ ճշմարտութեան մասին *խօսեցաւ*, այլ ճշմարտութիւնն *եղա՛ւ*. Բրիստոս ըսաւ *«Ես եմ ճշմարտութիւնը»*, և ոչ թէ *«ես գիտեմ ճշմարտութիւնը»* կամ *«ես կը խօսիմ ճշմարտութեան մասին»* .

Մինչեւ Բրիստոսի Մարդեղութիւնը, ճշմարտութիւն բառը *տեսարանական* երեւոյթ մըն էր, Բրիստոսով ան եղաւ *ըօջափելի ու տեսանելի* .

Աստուածաբաններ կը հետաքրքրուին Աստուծաշունչի *գրակա-նութեան* վերաբերեալ հարցերով և հեղինակներով, ո՛չ Աստուծաշունչին *պատգամովը*: Յիսուս Բրիստոսի կեանքն ու գործունեութիւնը ակաթեմական հարց մը ըլլալու չէ՛, այլ հաւատալու, հաւանելու և յօժարելո՛ւ խնդիր մը: Կարգ մը աստուածաբան կոչուած ակադեմականներ, վերացական արժեքներով խանդավառ ու համամարդկային փուճ կարգախօսներով լեցուն են: Ամերիկեան նախագահական թեկնածու, Ատլէյ Սթիվընսըն ըսած է. «Լրագիրներու խմբագիրները մարդիկ են, որոնք ցորենը կը գատեն յարդէն և յետոյ յա՛րդը կը հրատարակեն... »:

- ա. Յիսուս Ինքզինք կը կոչէ. "Աստուծոյ Խօսք"ը, "Բանն Աստուծոյ", ոչ թէ *գրութիւն մը* . այլ իմաստաւորող և ապրո՛ղ Մեկնաբանութիւնը:
- բ. Ոչ թէ ո՞վ գրած է Ս.Գիրքը, այլ ո՞վ *յայտնաբանա՛ծ* է գԱստուած:

գ. Յիսուս Զրիստոս ապրեցաւ որպէս կենդանի՝ Աստուածայայտ-
նութիւն և հայելացումը **Սէ՛ր Աստուծոյ:**

Չորս Աւետարանները Աստուծոյ և մարդուն ամենասերտ
յարաբերութեան և հաղորդակցութեան մեծագոյն կոթողներն են:
Հոն կը տեսնենք թէ ինչպէս անպարագրելին Աստուած կը պար-
փակուի մեր հունաւոր մարմնին սահմաններուն մէջ: Զրիստոսի
Մարմինը կը վերածուի նշխարի ու մասունքի, գերեզմանը՝
վկայարանի, յիշատակը՝ տօնի և կեանքը՝ Աւետարանի:

Աւետարանին պատգամը, Աստուծոյ արդարութիւնը և
ողորմութիւնը և անոր թագաւորութեան գալուստը ցոյց կու տայ
մարդկային կեանքին ու աշխարհի վրայ:

Աւետարանները չգրուեցան որպէս պատմական հետա-
քննութիւններ: Աւետարանները գրուեցան ցոյց տալու եկեղեցիին
հաւատքը և գործօն դաստիարակչական ֆարոգութիւնը: Աւետարան-
ները փաստարկութիւններն են Աստուծոյ պատմական իրագործու-
թիւններուն: Աւետարանները Յիսուս Զրիստոսի սիրոյ խորացումն ու
վերացումն են, այսինքն, Սրբազա՛ն Մատեան, յաւերժակա՛ն
Ակնադրիւր:

Յովհաննէս առաքեալ կը ներկայացնէ իր Վարդապետը
բոլորովին տարբեր դիտանկիւնէն, որովհետեւ ան ճանչցած էր իր
Վարդապետը աւելի խո՛ր հասկացողութեամբ ու ջերմ սիրով:
Յիսուս, այս աշակերտին մէջ ճանչցած էր եզակի հոգի մը, և այդ
իսկ պատճառով էր մայրը աւանդ յանձնեց Յովհաննէսին: Աստուա-
ծաշունչի ուսումնասիրութիւնը կը պահանջէ յատուկ նուիրում և
անձնագործիւն: Ուսումնասիրողը ենթարկուելու է Հոգիին
ներգործութեան և յօժարելու է կեանքի՝ վերածելու գրուածը և
ապրելու զայն:

Վարդանանց հերոսամարտի պատմութիւնը կու գայ փաստելու
մէկ անուրանելի ճշմարտութիւն, թէ՛ հայ մարդը կարդացած էր
Հոգիին գրել տուածը՝ Աստուածաշունչ Մատեանը, և ֆրիստոնէա-
ցած՝ ամբողջ էութեամբ, ա՛յնքան ուժգին և հարազատ, որ կրնար
«Մ՛ջ» ըսել պարսիկ բռնատերին և մղել անհաւասար պայքար
հաւատքին ու հայրենիքին համար:

Բոլոր Աւետարաններն ալ կը վկայեն Յիսուսի Յարութիւնը:

1. Բոլորն ալ համաձայն են Անոր գործած հրաշքներուն և մե-
ռելներ յարուցանելուն:
2. Բոլորն ալ համաձայն են Անոր առակներով ֆարոգչութեան:
3. Բոլորը համամիտ են անոր խաչելութենէն անմիջապէս առաջ
նախաձայնած վախճանական դէպքերուն և վերջին Դատա-

տանին վերաբերմամբ--Մատթ. 24, Մարկոս 13, Ղուկաս 21, Յովհաննէս 15-16 գլուխները:

Հաւատքը անցեալ դարերու պատմական փորձառութիւն մը չէ, այլ *հանապազօրեա՛յ ապրում* մըն է որ կը կարօտի սերտողութեան ու վերանորոգման: Կեանքը անհրաժեշտ ու հրամայական նորոգութեան կարիքը ունի:

Մինչեւ հիմա խօսեցանք Հին Կտակարանի ու Չորս Աւետարաններու մասին: Կա՛յ նաեւ **հինգերորդ Աւետարան** մը եւս:

Հինգերորդ Աւետարանը քրիստոնէաներուն ապրած կեանքն է:

1. Ամենէն աւելի Քրիստոնէայ եմ ըսողները կարիքը ունին Աւետարանի ճառագայթող լոյսին:
2. Առաջին քրիստոնէաներու մէջ բարոյական գերադաս ուժ մը արտայայտուեցաւ, աստուածային գերիվեր կեանք մը և նկարագիր մը ի յայտ եկաւ:
3. Ի՞նչ իմաստ ունի եկեղեցի երթալ և կամ աղօթքի կենալ առանց զգալու Աստուծոյ ներկայութիւնը և հոգեկան գոհունակութիւնը ապրելու:
4. Ի՞նչ իմաստ ունի աշակերտին դպրոց երթալը եթէ ուսում պիտի չստանայ:
5. Ի՞նչ իմաստ ունի մարդուն գործի երթալը, աշխատանք թափելը եթէ արդար դրամ պիտի չջանի:
6. Հայ արուեստագէտներ կը ճառեն Հայ եկեղեցիին ճարտարապետական բացառիկ կառոյցէն, կուսակցականներ կը գնահատեն եկեղեցին պաշտպանող նահատակները, մտաւորականները կը գովաբանեն եկեղեցական գրական աշխատանքները՝ բանաստեղծութիւնն ու եկեղեցեական ջարականները, քաղաքագէտներ եկեղեցիներուն և խաչքարերուն ներկայութեամբ կը փաստեն հայու ներկայութիւնը Թուրքիոյ մէջ:

Բոլոր այդ հայ ներկայացուցիչները որքա՞ն հաւատք կ'ընծայեն Քրիստոսի եկեղեցւոյ իսկութեան: «Պանդոկին մէջ տեղ չկար» սուրբ Ծնունդի գիշերը--Ղուկ. Բ. 7

1. Աշխարհ օթեւանին մէջ տեղ չկայ Քրիստոսի բարոյականութեան:
2. Մարդկային սրտի օթեւանին մէջ, այսօր, տեղ չկայ սիրոյ, ծանայութեան և զոհողութեան, որ Յիսուս Ինք յայտնեց:

Ծաղիկները կը գրաւեն և կ'իւրացնեն արեւին անուշահոտութիւնը ու կը սփռեն աշխարհի: Պտուղները կը սեփականացնեն

անուշահամ ու սննդարար իսկութիւնը արեւին ու կը մատուցանեն մարդոց ու կենդանական աշխարհի: Մարդիկ որպէս գերագոյն արարածները Արարիչին, ի՞նչ կ'իւրացնեն և ի՞նչ կը սեփականացնեն աստուածային շնորհ պարգեւներէն, որ փոխանցեն մարդաշխարհի կարօտեալներուն:

Նահատակներով երկիր է Հայաստան աշխարհ, սուրբերու աղօթքով թաթաւուած և մարտիրոսներու արեամբ ոռոգուած: Կեանքը նպատակ մը հետապնդել է. պայքար մըն է կատարելութեան հասնելու համար: Կեանքին իմաստը օրերու *ջարֆին* մէջ է՛, այլ օրերուն *կեա՛նք* տալուն մէջն է: Կեանքը պարտի դառնալ հանդիսարան հաւատքի, սիրոյ ու ծառայութեան:

Քրիստոսի մելանուջ ձայնը հրաւեր մըն է որ կ'ըսէ. «Եկէ՛ք ինձի, բոլոր յոգնածներ և բեռնաւորուածներ, և ես պիտի հանգստացնեմ ձեզ», որ կը հնչէ մեղմ ու բաղք: Այդ ձայնը հաղորդական և գրաւիչ ուժ մը ունի, որ կը նորոգէ՛ մեղաւորներուն տառապալից կեանքը և կը սփոփէ՛ տանջուած սրտերը:

Կ'ուզեմ վերջացնել այս մտածումներս մէկ նախադասութեամբ:

Այն մարդը, որ տիեզերական հրաշալոյս գեղեցկութիւններուն մէջ չի տեսներ Արարիչ Աստուածը, անոր մէջ կը պակսի ոչ թէ *հաւատքը*, այլ *դատողութիւնը*:

Նոյեմբեր 13, 1996
Թորոնթօ

Հոգեւոյս եղիշէ Պատրիարք Դուրեան. համեստութեան և խոնարհութեան սրբափայլ տիպար մըն էր, որ յաւերժօրէն կ'երգեհոնէ.

*«Եթէ զիս տանիս դէպի Յորդանան
Բացուած երկինքի հրաշքներուն ներքեւ,
Կու գամ վայելել Զու սիրոյդ պարգեւ
Վայրերն այն դաւար, ջուրերն հանգստեան:*

*Ո՛հ, միթէ կրնա՞մ գալ Զու ետեւէդ
Երբ խաչը ուսիդ կ'ելլես գողգոթա.
Բայց ի՞նչ սերտ հրապոյր, ի՞նչ բուռն ուժ է դա՛
Որ զիս մի՞նչեւ հո՛ն կը տանի Զեզ հետ»:*